ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 14.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/02

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 29.12.2017թ. թիվ 03/26-3/9-18 գրությամբ «Դարֆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02609379) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5008 գրության հիման վրա, 29.12.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Դարֆ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր ՀՀ ֆինանսների նախարարության լիազորված ներկայացուցիչ Արթուր Բաղդասարյանը:

2. **<u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5008 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 ծածկագրով պայմանագրի 3.1.1 կետը, ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 20-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 4 հատ համասեզոն նշանակության, 235/55R17 չափի, «VIATI V-237» անվանմամբ անվադողերի, և 8 հատ 235/65R17 չափի, «Մատադոր» ապրանքանիշի, «MP92 Sibir Snow Suv» անվանմամբ անվադողերի մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրի լուծման վերաբերյալ գրությունը 28.12.2017թ. ուղարկվել է մասնակցի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչներ Արմեն Սիմոնյանը և Արայիկ Դարբինյանը:

3. **<u>«Դարֆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Դարֆ» ՍՊԸ-ն 16.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «Դարֆ» ՍՊԸ-ն՝ մասնակցելով ՀՀ պաշտպանության նախարարության ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով կազմակերպված գնման ընթացակարգին, առաջնորդվել է գնումների մասին օրենսդրությամբ և կատարել է ընթացակարգով նախատեսված պահանջները:

Համաձայն 19.06.2017թ. ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև կնքված ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար մատակարարման պետական գնման N ՇՀԱՊՁՊ-4/7-3 պայմանագրի, «Դարֆ» ՍՊԸ-ն պարտավորվել է

վաճառել Պայմանագրի անբաժանելի մասը համարվող տեխնիկական բնութագրով և գնման ժամանակացույցով սահմանված տարբեր տեսակի ապրանքներ (անվադողեր): Վերոնշյալ պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական բնութագրի (հավելված 1) 43-րդ և 29-րդ չափաբաժիններին համաձայն՝ «Դարֆ» ՍՊԸ-ն պարտավորվել է մատակարարել թվով 8 հատ 235/65R17 108H ձմեռային (MATADOR MP92 Sibir Snow Suv) և թվով 4 հատ 235/55R17 99H համասեզոն (VIATTI V-237) անվադողերը: Թվով 8 հատ 235/65R17 108H ձմեռային (MATADOR MP92 Sibir Snow Suv) անվադողերը 2017թ. օգոստոս ամսին պատվիրվել են «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից, սակայն արտադրող գործարանի կողմից կատարված վրիպման արդյունքում սեպտեմբեր ամսին «Դարֆ» ՍՊԸ-ին արտադրող գործարանի կողմից մատակարարվել են 235/65R17 104H ձմեռային MATADOR անվադողերը, ինչի պատճառով «Դարֆ» ՍՊԸ-ն ստիպված է եղել թվով 8 հատ 235/65R17 108H ձմեռային MATADOR MP92 Sibir SnowSuv անվադողերը կրկին պատվիրել նոյեմբեր ամսին և դրանք արտադրվել են միայն դեկտեմբեր ամսին և «Դարֆ» ՍՊԸ-ն անմիջապես անհրաժեշտ քանակը կրկին պատվիրել է արտադրող գործարանից: Սակայն, նոյեմբեր ամսվանից սկսած մեծ քանակով ձյան տեղումների պատճառով դեկտեմբեր ամսվա ընթացքում Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բեռնատար մեքենաների համար փակ լինելու և նման ֆորս-մաժորային պայմանների առկայության ներքո ապրանքների ներմուծման գործընթացի կազմակերպման անհնարինության պատճառով «Դարֆ» ՍՊԸ-ն զրկվել է իր պայմանագրային պարտավորությունները պատշաճ կատարելու հնարավորությունից: Սույն թվականի դեկտեմբերի 8-ին ՀՀ պաշտպանության նախարարին և դեկտեմբերի 12-ին՝ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտին ուղղված նամակներով «Դարֆ» ՍՊԸ-ն տեղեկացրել է վերոնշյալ ֆորս-մաժորային իրավիճակի մասին և խնդրել թույլատրել թվով 8 հատ 235/65R17 108H ձմեռային MATADOR MP92 Sibir Snow Suv անվադողերը ՀՀ ներմուծումից հետո անմիջապես մատակարարել ՀՀ ՊՆ-ին: Սույն թվականի դեկտեմբերի 19-ին «Դարֆ» ՍՊԸ-ն տեղեկացրել է ՊՆ ՆՏԱ դեպարտամենտին թվով 8 հատ 235/65R17 108H ձմեռային MATADOR MP92 Sibir Snow Suv անվադողերը ՀՀ ներմուծելու մասին և պատրաստակամություն է հայտնել դրանք մատակարարել ՀՀ ՊՆ: Նաև ցանկանում ենք անդրադառնալ «Դարֆ» ՍՊԸ կողմից մատակարարված թվով 4 հատ 235/55R17 99H համասեզոն VIATTI V-237 անվադողերը ՊՆ համապատասխան ստորաբաժանումների կողմից չընդունելու հետ կապված ստեղծված

իրավիճակին: Տվյալ 235/55R17 99H համասեզոն VIATTI V-237 անվադողերի վրա բացակայում է M+S նշագրումը, որը որոշ անվադող արտադրող կազմակերպությունների կողմից օգտագործվում է համասեզոն անվադողերի նշման պարագայում: Տվյալ անվադողերի վրա բացակայում է M+S նշագրումը այն պատճառով, որ ներկայումս ԵԱՏՄ շուկաներում կատարվում են տերմինների և նշումների հստակեցումներ և փոփոխություններ, իսկ արտադրող ընկերությունները ստիպված են քայլ առ քայլ ապրանքային տեսականին համապատասխանեցնել օրենսդրության պահանջներին: Տվյալ անվադողերը հանդիսանում են A/T (ALL Terrain) անվադողեր, որոնք հանդիսանում են ունիվերսալ ռեզինի ծածկույթով անվադողեր, նախատեսված ճանապարհներին և արտաճանապարհային պայմաններում օգտագործելու համար, շահագործվում են ասֆալտին, ավազների, քարերի, ձյան և ամենօրյա շահագործման պայմաններում: Անվադողերի վրա առկա է A/T նշումը, որը նշանակում է, որ այդ անվադողերը կարող են օգտագործվել վերոնշյալ ճանապարհային և շահագործման պայմաններում: «Դարֆ» ՍՊԸ-ն որպես հիմնավորում սկզբից ներկայացրել է համացանցի միջոցով անվադողերի նշագրման վերաբերյալ կատարված ուսումնասիրությունը, իսկ հետագայում արտադրող գործարանի կողմից գրությունը, որ տվյալ անվադողերը նախատեսված են շահագործման տարվա բոլոր եղանակներին: Ինչպես նաև, որպես այլընտրանքային տարբերակ, «Դարֆ» ՍՊԸ-ն առաջարկել է ՊՆ ՆՏԱ դեպարտամենտին թվով 4 հատ 235/55R17 99H համասեզոն VIATTI V-237 անվադողերը փոխարինել թվով 4 հատ 235/55R17 99W համասեզոն /WESTLAKE SA07/ անվադողերով, որոնց վրա առկա է M+S նշագրումը, սակայն բոլոր հիմնավորումները և առաջարկները առանց որևէ հիմնավորման մերժվել և անտեսվել են ՊՆ համապատասխան ստորաբաժանումների կողմից: Ստեղծված իրավիճակում «Դարֆ» ՍՊԸ-ն փորձել է հնարավոր բոլոր միջոցներով կատարել իր կողմից ստանձնած պայմանագրային պարտավորությունները:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները և ներկայացված վերլուծությունը՝ գտնում ենք, որ չկան բավարար հիմքեր «Դարֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար: Խնդրում ենք Ձեզ լիարժեք ուսումնասիրել՝ արդյո՞ք ՊՆ համապատասխան ստորաբաժանումների կողմից մատակարարված անվադողերը չընդունելու գործողությունները/որոշումները և ֆորս-

մաժորային իրավիճակի առկայության մասին տեղեկացնելու փաստը անտեսելը համապատասխանում է ՀՀ գնումների մասին օրենսդրության պահանջներին»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Գառնիկ Բաղալյանը և լիազորված ներկայացուցիչ Արմեն Միքայելյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2018/02 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2017թ. թիվ 03/26-3/9-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5008 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 ծածկագրով գնման պայմանագիրը, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին 20.12.2017թ. և 27.12.2017թ.ուղղված զեկուցագրերը, Պատվիրատուի՝ «Դարֆ» ՍՊԸ-ին ուղղված 26.12.2017թ. թիվ ԴՎԱ/4974 գրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքվել է N ՇՀԱՊՁԲ-4/7-3 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակակարել Պայմանագրի N1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար (հավելված N3):
- 3.1.1 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

- 3.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայմանագիրը:
- 3.1.7.1 կետի «ենթակետի» համաձայն՝ Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք;

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրի և Հավելված 2-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է 2017թ. հուլիս ամսին մատակարարել թվով 4 հատ, համասեզոնային նշանակության, 235/55R17 չափի, «VIATI V-237» անվանմամբ անվադող, և 2017թ. երրորդ առամսյակում՝ 8 հատ 235/65R17 չափի, «Մատադոր» ապրանքանիշի, «MP92 Sibir Snow Suv» անվանմամբ անվադող:

Պայմանագրով նախատեսված՝ վճարման ենթակա ընդհանուր գումարը կազմում է 522,000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ):

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 24.07.2017թ. կազմված արձանագրության համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 ծածկագրով գնման պայմանագրի շրջակնակներում Ընկերության կողմից ՀՀ ՊՆ 84029 զորամաս պետք է մատակարարվեր թվով 4 հատ 235/55R17 չափի, «VIATI V-237» համասեզոնային անվադողեր, սակայն Ընկերության կողմից մատակարարվել են թվով 4 հատ 235/55R17 չափի VIATI V-237 անվադողեր, որոնց վրա չկա համապատասխան նշագրում այն մասին, որ դրանք հանդիսանում են համասեզոնային:

Վերը նշված փաստաթղթում արձանագրվել է նաև, որ «Դարֆ» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով համապատասխան գրություններ և հիմնավորող փաստաթղթեր տվյալ անվադողերը արտադրող գործարանից պնդում է, որ անվադողերի նկատմամբ Եվրասիական տնտեսական միության կողմից սահմանված պահանջներին համաձայն՝ համասեզոն անվադողերի հասկացությունը դուրս է եկել շրջանառությունից, և անվադողերի ներկայիս տեսակներն են սովորական (նորմալ), հատուկ և ձմեռային: Ըստ նույն փաստաթղթով տրված եզրակացության՝ վերը նշված նյութական միջոցները չեն ընդունվել պահեստ, քանի

որ «Դարֆ» ՍՊԸ-ն ցանկություն է հայտնել հիմնավորող փաստաթղթերը ներկայացնել վերադաս հրամանատարությանը՝ վերջնական որոշում կայացնելու համար:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից Պայմանագրի կատարման վերաբերյալ 12.12.2017թ. տրվել է բացասական եզրակացություն և նշվել, որ Պայմանագրի շրջանակներում կատարողը մուտքագրման է ներկայացրել տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքատեսակ, իսկ 3-րդ եռամսյակում մատակարարման ենթակա անվադողերը դեռ մուտքագրման չեն ներկայացվել:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետը 20.12.2017թ. զեկուցագրով ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 պայմանագրի շրջանակներում Ընկերությունը 20.12.2017թ. դրությամբ չի մատակարարել 2017թ. մինչև սեպտեմբերի 30-ը մատակարարման ենթակա թվով 8 հատ 235/65R17 անվադողեր, իսկ 2017թ. մինչև հուլիսի 31-ը մատակարարման ենթակա 4 միավոր 235/55R17 անվադողերի փոխարեն ներկայացրել է մատակարարման պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող անվադողեր, որոնք Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից չեն ընդունվել: Միաժամանակ, ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետը տեղեկացրել է, որ անվադողերի չմատակարարման և տեխնիկական բնութագրին չհամապատասխանող անվադողերի մատակարարման վերաբերյալ «Դարֆ» ՍՊԸ-ն գրություններով դիմել է և ՀՀ պաշտպանության նախարարին և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին՝ հայցելով չլուծել Պայմանագիրը:

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՏԱ վարչության պետը հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.1 կետի դրույթները՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ պետի պժկ-ին ուղղված 27.12.2017թ. զեկուցագրով առաջարկել է միակողմանի մասնակի լուծել Պայմանագիրը՝ Պայմանագրի լուծման օրը դիտելով 20.12.2017թ., և «Դարֆ» ՍՊԸ-ի նկատմամբ կիրառել օրենսդրությամբ սահմանված բոլոր տեսակի տույժերն ու տուգանքները:

Հիմք ընդունելով վերոնշյալ պայմանագրի 3.1.1 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 20-ից միակողմանի մասնակի լուծել է 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 գնման պայմանագիրը (2 չափաբաժինների մասով):

Պատվիրատուն 29.12.2017թ. թիվ ԴՎԱ/5008 գրությամբ դիմել է «Դարֆ» ՍՊԸ-ին՝ տեղեկացնելով, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.1 կետը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2017թ. դեկտեմբերի 20-ից միակողմանի մասնակի լուծել է վերը նշված պայմանագիրը՝ 4 հատ համասեզոն նշանակության, 235/55R17 չափի, «VIATI V-237» անվանմամբ անվադողերի և 8 հատ 235/65R17 չափի, «Մատադոր» ապրանքանիշի, «MP92 Sibir Snow Suv» անվանմամբ անվադողերի մասով (2 չափաբաժին)՝ միաժամանակ առաջարկելով Ընկերությանը նույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում վճարել Պայմանագրով նախատեսված տույժը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստի ժամանակ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները հայտնեցին, որ ՀՀ ՊՆ և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի շրջանակներում Ընկերության կողմից բազմիցս խախտվել են պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես Ընկերությունը Պատվիարատուին է մատակարարել պայմանագրերով նախատեսված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող ապրանքներ, ինչը հանգեցրել է վերջինիս կողմից մատակարարված ապրանքները չընդունելուն և կնքված պայմանագրերի միակողմանի լուծմանը:

Ընկերության ներկայացուցիչը պնդեց «Դարֆ» ՍՊԸ-ի 16.01.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ ներկայացված դիրքորոշումը՝ անդրադառնալով «Դարֆ» ՍՊԸ կողմից մատակարարված թվով 4 հատ 235/55R17 99H համասեզոն VIATTI V-237 անվադողերը ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանման կողմից չընդունելու փաստին, հայտնելով որ 235/55R17 99H համասեզոն VIATTI V-237 անվադողերի վրա համասեզոնայինությունը հավաստող M+S նշագրման բացակայությունը բացատրվում է այն հանգամանքով, որ ներկայումս ԵԱՏՄ շուկաներում կատարվում են տերմինների և նշումների հստակեցումներ և փոփոխություններ, իսկ արտադրող ընկերությունները ստիպված են քայլ առ քայլ ապրանքային տեսականին համապատասխանեցնել փոփոխվող օրենսդրության պահանջներին:

«Դարֆ» ՍՊԸ-ն որպես հիմնավորում Խորհրդին է ներկայացրել նաև մատակարարված անվադողերը արտադրող գործարանի կողմից գրավոր հավաստումն այն մասին, որ տվյալ անվադողերը նախատեսված են շահագործման տարվա բոլոր եղանակներին:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Օրենսգրքի 538-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ մատակարարման պայմանագիրը համարվում է փոփոխված կամ լուծված՝ այդ մասին կողմերից մեկի ծանուցումը մյուս կողմի ստանալու պահից, եթե ծանուցման մեջ նախատեսված չէ կամ կողմերի համաձայնությամբ սահմանված չէ պայմանագրի փոփոխման կամ լուծման այլ ժամկետ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Դարֆ» ՍՊԸ-ն Պայմանագրով նախատեսված ապրանքը սահմանված ժամկետում չմատակարարելով խախտել է Պայմանագրի 1.1 կետով ստանձնած պարտավորությունը 2 չափաբաժինների մասով, ինչը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 5-րդ հոդվածի՝

- 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է

կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև 3 տարի ժամկետով(...):

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 125-րդ կետի (այսուհետ՝ նաև Կարգ) 1-ին ենթակետի համաձայն՝ Օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամիս ժամկետով, եթե ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որի հետևանքով տուժանքի, հաշվարկված վնասի, տույժի կամ տուգանքի չափը չի գերազանցում գնումների բազային միավորը և մինչև բողոքարկման խորհրդի կողմից համապատասխան որոշում ընդունվելը՝ պատճառված վնասը, հաշվարկված տույժը կամ տուժանքը վերականգնվել է կամ, եթե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է ժամկետանց հարկային պարտավորություններ կամ որակավորման չափանիշների, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև տեխնիկական բնութագրերի գնահատման արդյունքում այդ որակավորման չափանիշները կամ տեխնիկական բնութագրերը որակվել են որպես մասնակցի կողմից ներկայացված հայտարարություններին չհամապատասխանող:

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Դարֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 13.06.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է պաշտոնական ընթացակարգ:

Խորհուրդը քննելով նշված ընթացակարգը, արձանագրել է, որ «Դարֆ» ՍՊԸ-ն 29.03.2017թ. «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/6-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-4/7» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտը գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի թվով 19 չափաբաժինների մասով մերժվել է՝ գնման առարկայի համար առաջարկված ապրանքների

տեխնիկական բնութագրերը ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքների տեխնիկական բնութագրերին չհամապատասխանելու հիմքով, ինչը հանգեցրել է տվյալ չափաբաժինների մասով «Դարֆ» ՍՊԸ-ի գնման գործընթացի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշված խախտումը Խորհրդի 14.07.2017թ. ընդունած թիվ ՍՑ-ԱՄ-2017/18 որոշմամբ որակվել է որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում:

Խորհուրդը 14.07.2017թ. թիվ ՍՑ-ԱՄ-2017/18 որոշմամբ մերժել է «Դարֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով 13.06.2017թ. նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը, որոշման հիմքում դնելով այն հանգամանքը, որ «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում մրցակցային գործընթացին մասնակցելու համար հայտ ներկայացրած լինելու փաստն ապացուցող տեղեկատվություն առկա չէ:

Խորհուրդն արձանագրում է, որ «Դարֆ» ՍՊԸ-ն՝

ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտոնական ընթացակարգի քննության ընթացքում Խորհրդին տրամադրել է տեղեկատվություն այն մասին, որ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից «ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/6-17/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով «Դարֆ» ՍՊԸ-ի կողմից 31.03.2017թ. ներկայացվել է հայտ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ֆինանսական վարչության կողմից 23.12.2017թ. ներկայացված զեկուցագրի համաձայն՝ ՀՀ ՊՆ և «Դարֆ» ՍՊԸ-ի միջև 19.06.2017թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-4/7-3 ծածկագրով գնման պայմանագրի միակողմանի մասնակի լուծման արդյունքում Ընկերության կողմից վճարման ենթակա տույժերի, տուգանքների և Պայմանագրի կատարման ապահովման (տուժանք) հանրագումարը կազմում է 885.124 ՀՀ դրամ:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ առկա են «Դարֆ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր, քանի որ ընկերությունը հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է գնման գործընթացի շրջանակում

ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով, Կարգի 125-րդ կետի 1-ին ենթակետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 29.12.2017թ. «Դարֆ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02609379) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Դարֆ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ վեց ամիս ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**